ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24 -Ա
« 15 » ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ 30 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանում ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու մասին» թիվ 30 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վահան Աբրահամյանին:»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Ք.Եղեգնաձոր **Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**